սրտի իմոյ գրեալ կայ, վասն այն ոչ կարեմ մոռանալ զնա։ Զոր իբրև հանին կենդանւոյն զսիրտն, տեսին գրեալ 'ի նմա ոսկի գրով զանունն Քրիստոսի. և ապա արկին զնա առաջի առիւծուց. և իսկոյն հեղծուցին զնա։ Թեղինոս Ֆիլիսոֆոսն գրեաց Տրայիանոսի՝ ոչ նեղել զքրիստոնեայսն։ Զայս Տրայիանոսէ պատմեն թէ՝ Գրիգորիոս սուրբ Հայրապետն Հռոմայ տեսեալ զսքանչելի գործսն՝ զոր շինեաց Տրայիանոս կռապաշտ արքայն զկամարակապ կամուրջսն 'ի վերայ մեծամեծ և անհուն գետոցն, և զսալարակապսն 'ի ձորս, 'ի բազմամուռ և 'ի տղմային տեղիսն Ճանապարհաց, զարմանայր յոյժ Հայրապետն Գրիգոր, և հայցէր յԱստուծոյ ներումն Տրայիանոսի. և ասէր թէ՝ առանց կամացն Աստուծոյ՝ մարդ այսպիսի անպատմելի գործս ոչ կարէ առնել։ Եւ 'ի բազում ժամանակս հայցէր յԱստուծոյ արտասուօք զփրկութիւն Տրայիանոսի. և եկեալ առ նա հրեշտակ Տեառն՝ ասաց, վա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան